

ԴԻՑԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՌԵՐ «ՈՏ» ԵՎ «ՈՒՏ»
ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐՈՎ

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Մ. Արեղյանը, խոսելով «ոտ» վերջավորության մասին, գրում է, որ այն «ցույց է տալիս մի բան վրան, մեջը ունենալը» (օրինակ, «մրուտ», «յուղոտ», «մսոտ», «ջղոտ»)¹: Նա միաժամանակ նշում է, որ «ոտ» վերջավորությունն էլ ցույց է տալիս «այն տեղը, ուր մի բանից շատ կա» (օրինակ՝ «ծառոտ», «թփոտ»)²: Ըստ որում, Արեղյանն ընդգծում է, որ «մի բանի բառերի մեջ «ոտ»-ը նույնանում է «ոտ» ածանցի հետ ավելի «սաստկական նշանակությամբ» (օրինակ, «ջղոտ-ջղոտ»)³:

Ահա այսպիսի բառերի շարքումն է, որ հատուկ տեղ են գրավում մի շարք բառեր, որոնց մեջ պահպանված են դիցաբանական պատկերացումների հետքեր և որոնց մասին այդ առումով ցարդ խոսք չի եղել:

Հանրահայտ է, օրինակ, «դիվառ» բառը, որը կապվելով «դև», «դիվահար» բառերի հետ, մեղ տանում է դեպի դիցաբանական պատկերացումների աշխարհը: Համապատասխան օրինակ կարող է համարվել նաև «լուսնոտ» բառը՝ կապված որոշ հիվանդության հետ: Ունենք «արևոտ» բառը ևս, որը երկակի իմաստ ունի և ընկալվել է նաև դիցաբանական առումով: Այս կապակցությամբ ավելի ուշագրավ է «հրոտից» բառը որպես ամսանուն. հիմքում «հրո» բոլորն է՝ «ոտ» ածանցով: Դ. Ալիշանը գրում է, որ համապատասխան ամիսը «հրոտիցն» է կոչվել «հրոյ անուամբ»: Նա, որպես համանման օրինակ, հիշում է հնդկական դիցաբանությունից Սիվա (Շիվա) աստծու օրինակը. «Սիվա շաստվածը Բուտա կոչեն»⁴:

Հայտնի է, որ անցյալում դիցաբանված էին ոչ միայն ամիսների, այլև օրերի անունները: Ավելյաց ամսվա 5 օրերից մեկը կոչվել է «Փառազնոտի»: Դ. Ալիշանը գրում է. «Փեռազնոտի կամ Փառազնոտի, որ և Փառազնոտ դրված է, ավելի անծանոթ և ավելի դիցաբանական կերևի»⁵: Ակզնադրյունների համաձայն «Փառազնոտ՝ զհուրն» իմաստ ունի⁶: Ուշագրավ են աշխարհագրական համապատասխան անունները. «Փառ անվամբ այսօր գյուղ մը կա Մոկք դավառին մեջ: Փառավան, գետ ի Վրահայս»⁷: Հրի, կրակի հետ կապված աշ-

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 265:

2 Նույն տեղում, էջ 275:

3 Նույն տեղում:

4 Դ. Ալիշան, Հին հայաստան..., Վենետիկ, 1910, էջ 156:

5 Նույն տեղում, էջ 122:

6 Նույն տեղում, էջ 123:

7 Մոքման, Հայ բեռնաձև արձանագրությունք, Կ. Պոլիս, 1872, էջ 49:

խարհայրական անուններից ուշագրավ է պատմական Հայաստանի Փայտակարանի Հրարոտ (Հրաբոտ-Պերոժ) գավառի անունը:

Վերևում նշվեց, որ հնդկական Սիվա (Շիվա) աստծուն հրի գաղափարի հետ կապված լինելու պատճառով կոչել են «Րուտրա»: Ուրարտական կամ հին հայկական աստվածներից մեկը նույնպես կոչվել է Շիվինի և իմաստավորե. արևի պաշտամունքը: Հավանաբար այս Շիվինի աստծու անունից էլ ունենք «Շվոտ» բառը՝ կապված դիցաբանական պատկերացումների հետ: Հայկական սովորույթներում դարնան տարեսկզբին, մարտի նախընթաց օրը, տան ղռները բացում էին, ճյուղերով ծածում պատերը և գոշում. «Շուտուն ի դուրս, Մաբուն ի ներս»⁸, Պարզ է, որ Շվոտը դիցաբանական էակ է՝ ածանցված հավանաբար Շիվինիից:

«Ուտ» ածանցով դիցաբանական անունների ենք հանդիպում նաև հին հայկական դիշերային ու ցերեկային ժամերի անունների մեջ. «Շաղաւոտ», «Կսմաւոտ», «Արագոտ»⁹:

Քանի որ հին պատկերացումներն ու դիցաբանությունը տարածվել էին նաև երկնային մարմինների ու բնության երևույթների վրա, ուստի այստեղ էլ ուրեք են համապատասխան անուններ: Օրինակ, հին հայկական տիեզերագիտական պատկերացումների մեջ կա նաև «Ճոկանոտ» աստղանունը¹⁰:

«Ճոկանուտ»-ին հիշեցնում է «Ճանկոտ» անունը, որն, անշուտ, տարբեր է: Առանձին կարևորություն ունի միջնադարում զրի առնված դիցաբանական և ողանդավորական մի տոհմածառ, ուր առկա է նաև «Ճանկոտ»-ը: Տալիս ենք լուր նշված դիցաբանական անունների շարքը. Սիգդ շուն, Ուշկապարիկ, Պոպոդ, Մանես, Մանակ, Մանի, Սիմոն, Ճանկոտ, Աշեցի, Կաշեցի, Թոնդրկեցի, Պոլիկյան, Պարտկաշտ, Արևաղաշտ, Մանես, Բերքաջ, Մաղքոդ, Փասքեդ¹¹:

Հնում ունեցել ենք նաև անունով աստվածուհի, բրի տարբերակները հայտնի են Մոլի-Նար, Հեղի-Նար և այլ անուններով¹²: Ահա այս նաև աստծու անունից էլ ունենք «Նաբոտ» բառը՝ կապված հարսանեկան ծիսակատարությունների հետ:

Առանձին ուշագրություն է գրավում Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունը Սանատրուկ թագավորի մասին. «Արդ կոչեցա Սանատրուկ, ի դաւակէն դանուանակոշութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանոտայ»¹³: Ըստ որում, այստեղ Սանոտը դայակն է, որին օգնել է դիցաբանական սպիտակ շունը: Առասպելն այդտեղ մատնանշում է դիցաբանական կապ Սանոտ կնոջ և շան պաշտամունքի միջև: Չնայած Հ. Աճառյանը Սանոտ բառի «ծագումն անհայտ» է համարում, սակայն դիցաբանական պատկերացմամբ այն սերված է սան բառից՝ ոտ ածանցով: Իսկ սան նշանակում է դաստիարակության տակ գտնվող երեխա, որտեղից էլ սանսհայր, սանամայր և այլ բառերը: Տվյալ դեպքում ի՞նչ Սանոտը դայակ-դաստիարակն է, իսկ Սանատուկը՝ Սանոտի պարզեղ, որին օգնել է դիցաբանական շունը: Ըստ երևույթին, գոյություն է ունեցել նաև դաստիարակվող երեխաների երեակայական հովանավոր՝ Սան անունով, որ-

⁸ Ղ. Ալիշան, Հին հայտեր..., էջ 200:

⁹ Նույն տեղում, էջ 159—160:

¹⁰ Նույն տեղում, էջ 142:

¹¹ Զեոագիր № 1495, թերթ 178:

¹² Գր. Капанцян, Хеттские боги у армян, Ереван, 1940, էջ 42—48:

¹³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913, էջ 161:

տեղից էլ գաստիարակչուհին կոչվել է Սանու: Այստեղից էլ՝ Սանատուկ, ինչպես նաև Սանատուր անունները:

Ուշագրավ է նաև թաղոտ բառը, որ նշանակում է չար ոգուց հիվանդացած անձնավորություն: Կա նաև թաղա. որ նշանակում է չար ոգի: Այստեղից էլ՝ լիպոտել, որ ցույց է տալիս թաղայով բռնվել, հիվանդանալ¹⁴:

Գ. Ղափանցյանը փաստարկել է, որ թաղա, թեպալ կամ թաղի հասկացությունը «համընկնում է խեթական telip աստվածների կամ ոգիների անվան»¹⁵:

Ակնհայտ է, որ թաղոտ բառը ծագել է թաղա բառից՝ ոտ ածանցի օգնությամբ և դիցաբանական ըմբռնումների արդյունք է:

Ըստ երևույթին, աբոտ (Ղարաբաղում՝ աբուտ) բառն էլ ծագում է աբ արմատից և կապվում Արա Գեղեցիկի պաշտամունքի հետ:

Վերևում նշվեց, որ «ոտ» ածանցի նման երբեմն երևան է գալիս «ուտ» ածանցը: Դա նկատվում է նաև դիցաբանական բառերի մեջ. օրինակ, «դիվոտ» բառի նմանությամբ եղել է նաև «գրոդուդ» (գրոդուտ) ձև:

Պառաւ էսաց.— Ան գրոդուդ Մհեր ձի յոթ լաճ սպանի...¹⁶:

Այս օրինակները հիմք են տալիս հասկանալու նաև Սասունցի Դավթի սիրուհու՝ Խանդութի անվան բուն էությունը: Այն հանդիպում է «գրոդուդ», «արենուտ» բառերի նման «ուտ», «ուդ» («ութ») ածանցներով (Խանդուտ, Խանդուդ, Խանդութ, Խանտուտ) և մտածել տալիս խանդ բառից ծագած լինելու մասին (խանդ + ուտ):

Հ. Աճառյանն իր «Անձնանունների բառարանում» այս անվան բացատրություն համար դիմել է պարսկական բառերի օգնությամբ, որը սակայն, մեր կարծիքով, կարոտ է վերանայման: Խանդութ անվան հիմքում խանդ արմատը և ուտ ածանցը որոնելու առումով ուշագրավ է «Խանդեր» անվան բացատրությունը: Հ. Աճառյանն այս անվան համար գրում է «ծագումն ինձ անհայտ»:¹⁷ Եթե նա գտած լիներ Խանդութ բառի մեկնաբանությունը, ապա կմեկնաբաներ նաև Խանդեր անունը: Ահա այս անունն էլ ճիշտ պատասխան է ստանում, երբ նրա (խանդեր) հիմքում ևս տեսնում ենք խանդ բառը: Մեր իրականության մեջ եր հոգնակին հաճախ է երևան գալիս անունների մեջ. օրինակ, Շողեր-ը, որի մասին Հ. Աճառյանը գրում է. «շող բառի հոգնակից»:¹⁸ Այսպես նաև Շատեր-ը՝ «շատ բառի հոգնակից»:¹⁹ Ուստի ճիշտ այդպիսին է նաև Խանդեր անունը՝ խանդ բառի հոգնակից: Այստեղից միանգամայն հասկանալի է, որ խանդ արմատից կարող էր առաջանալ նաև Խանդուտ անունը: Ինչպես շուրջ բառից առաջացել է Շողեր անունը, այնպես էլ լոյս բառից ունենք Լուսեր, ապա՝ նաև Լուսոտ, որի համար Հ. Աճառյանը գրում է. «Լոյս բառից՝ ոտ մասնիկով, իբր լուսոտ լուսավոր»:²⁰ Ահա այս նույն օրինաչափությամբ էլ խանդ բառից առաջացել են Խանդեր և Խանդութ անունները:

Այս կապակցությամբ ուշագրավ են նաև Խաչ բառից առաջացած Խաչեր և Խաչոտ անունները: Հ. Աճառյանն այստեղ, լրիվ բացահայտած չլինելով «ոտ» վերջավորությամբ հայտնի անունների ծագման պատկերը, հայտնում է որոշ տարակուսանք: Խաչեր-ի համար նա գրում է՝ «Խաչ բառի հոգնակին կամ Խաչերես» անվան կրճատումից առաջացած անուն: Մեր թվարկած փաստերը

¹⁴ Ս. Մ ա լ ի ս ա յ ա ն ջ, Հայերեն բացատրական բառարան, համապատասխան բառերը:

¹⁵ Գ. Ղ ա փ ա ն ջ ա ն, Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 160. Տես նաև Դր. Կապանյան, Историко-лингвистические работы, Ереван, 1956, էջ 302—303:

¹⁶ «Սասնա ծռեր», Ա. 1936, էջ 104:

ցույց են տալիս, բայց տվյալ դեպքում հաշեր-ը ոչ թե հաշերես-ի կրճատ ձևն է, այլ ուրույն անուն, ծնված նույն արմատից (խաշ), որից են ծնվել նաև հաշոտ, հաշոտ և հաշերես անունները:

2. Անառայանը դժվարացել է նաև հաշոտ անունը բացատրելիս. «հաշ, բառից,— դրոմ է նա և ավելացնում,— բայց հայտնի չէ, թե ի՞նչ է —ոտ վերջավորությունը: Կարող է լինել —ոտ մասնիկը (ըստ բրուտ կա նաև հաշուա՛ծեր), բայց իմաստի կողմից անհարմար է թվում...»:

Այժմ, երբ մեզ համար պարզ է հարցի դիցարանական ըմբռնումը և նրա հին անցյալը, ապա անվիճելի է դառնում խաշ արմատից ոտ և ուտ ածանցների օգնությամբ հաշոտ և հաշուտ անունների ծագումը:

Բերված օրինակների ընդհանուր խմբում միանգամայն հասկանալի է դառնում նաև խանդ բառից հանդուտ և հանդեր անունների ծագումը: Այս ասումով ինդիքն ավելի հստակ է դառնում, երբ վերադառնալով մեր էպոսի համադրության, հիշում ենք նրա՝ որպես սիրո և խանդի աստվածուհու էությունը:

Խանդ բառը ըստ 2. Անառայանի «բնիկ հայ բառ» է, որի իմաստը ցույց տալիս նա նշում է «վառել», «բորբոքել», «փայլել», «խանդաղատանք» և այլ առումները՝ նրանց հետ կապելով նաև խանձ (խանձել), խանձարուր բառերը:

Աստվածաշնչի թարգմանության մեջ մեր ոսկեգարի հեղինակները սիրո երևույթը նկարագրող տողերի մեջ այնպես են օգտագործել խանդակաթ բառը, որ նրանով լիակատար պատկերացում է տրվում սիրո երևույթի և նրա բնույթի մասին.

Մուռեցէք զիս ի տուն գինւոյ,
Կարգեցէք ի վերայ իմ զսէր.
Հաստատեցէք զիս իւղով,
Կուտեցէք յիս խնձոր,
Ձի խանդակաթ եմ ես սիրեմ¹⁷:

էպոսի պատումներում պահպանվել է նաև մի ուրիշ դիցուհու անունը, որը նույնպես առաջացել է ոտ ածանցի կցումով: Խոսքը Սասունցի Դավթի մոր՝ Մեծ Մհերի կնոջ մասին է, որը կոչվել է Խուրոտ Մարեն.

Ձենով Հովան էլավ գնաց մըտ Մհերի կնիկ,
Լսաց.— Խուրտ Մարեն,
Էսօր Մհեր, կասեն, կը գա...¹⁸

Ինչպես տեսնում ենք, Մհերի կինը կրկնակի անուն ունի. հավանաբար մեկը հինն է, իսկ մյուսը հետագայում կցված համարժեք: Մեզ այստեղ հետաքրքրում է Խուրոտ անունը:

Ճիշտ է, Խուրոտ բառը մեկնաբանված է որպես գեղեցիկ, սիրուն, սակայն դուռ շրջանի պատկերացում է, որի տակ հանգչում է դիցարանական ու աղագրական իմաստ: Այն ծագել է Խուր արմատից և ոտ ածանցից:

Խուրոտ Մարենի դիցարանական ծագումը՝ կապված Խուր հասկացության հետ հաստատվում է էպոսի այլ վկայություններով: Դրանք հերոսների այն խմբի անուններն են, որոնք կազմում են մի ուշադրալի ամբողջություն. Խուր

¹⁷ «Երգ Երգոց», Բ, 4—6:

¹⁸ «Սասնա ծռեր», Ա, էջ 951:

Մանուկ, Խոր Գուսան, Խոր Վիրապ, Ճոռ Վիրապ և այլն: Անհավանական չէ, որ քրիստոնեական Գրիգոր Լուսավորիչը բռնել է հեթանոսական Խոր Վիրապի տեղը, մոտավորապես նույն օրինաչափությամբ, որով Խորհառ դիցուհին օժտվել է Մարեմ (Մարիամ կամ Մարինոս անունից) կրկնանունով: Այս Խոր կոչված հերոսները մեր էպոսի հին շերտերում պիտի որ ունեցած լինեին հիշեց նշանակալից դերը: Դրա փայլուն ապացույցը կարող է համարվել Մարա Մելիքի սպառնական պահանջը, որպեսզի իրեն ներկայացնեն՝

Դավիթի գլուխ,

Խոր Մանուկի աջ բազուկ...¹⁹,

Իրավացի է Կ. Մելիք-Օհանջանյանը, երբ գրում է. «Խոր Մանուկը Դավթի ու Մհերի կողքին մեծագույն դեր է կատարել Սասունի պատմության և կղզնապետ հայոց դիցաբանության մեջ»²⁰:

Վերևում նշեցինք Գրիգոր Լուսավորչի և Խոր Վիրապի դիցաբանական առնչությունը: Դա յուրովի փաստարկվում է նաև վերոհիշյալ տողերում «աջ բազուկին» տրված նշանակությամբ, որը հիշեցնում է Գրիգոր Լուսավորչի բազկի (աջի) սրբացման սովորությունը:

Կ. Մելիք-Օհանջանյանը քննելով նշված հարցը, կանգ է առնում էսյոսում հիշվող Հոթոթ Մոթոթ անվան վրա, ուշադրություն դարձնելով նաև Հոթոթ-մարտ ծաղկի անվանը: Դրանք բոլորն էլ նույն ձևով և նույն դիցաբանական ոլորտների հետ կապված ըմբռնումներ են: Նա միաժամանակ կարծում է, որ խոր բառը պարսկական ծագում ունի և նշանակում է աբ: Եթե դա ճիշտ է, ապա պարսիկների մոտ այն պիտի ներթափանցած լիներ խորիններից: Իսկ որքան է ճիշտ ենթադրել, թե խուրի-նուրի բառերի հիմքում ընկած է կրակը, դա թողնում ենք մասնագետներին: Ասենք միայն, որ էպոսում խոր անունն ստուգաբանվում է կրակափորձությամբ²¹, ուստի և յուրովի կապվում է կրակի հետ, ցուցաբերելով իր հարազատությունը Մեծ ու Փոքր Մհերների արևային կերպարներին:

Այս գծով Խորոտ Մարեն էլ իր հերթին է առնվում հրի ու արևի հետ:

Վանի շրջանում անցյալ դարի վերջերին գրի է առնվել ժողովրդական մի երգաշար, որի առաջին հատվածը նվիրված է Խորհառ դիցուհու գովերգությանը: Երգի մյուս հատվածներում շնայած առկա է սիրո գովք, սակայն դրանք, ըստ հրեություն, աղավաղված են և հեռացած բուն նյութից: Վերջին տողերում առկա են դիցաբանական պատկերացումներ.

... Ինքն սուրբ, իր անունն սուրբ,

Ոսկի մասունք մը շինեցեք,

Լուս տաճարին մեջ դրեք²²:

Դժվար է ասել, թե ում են վերաբերում այս տողերը (հավանաբար Խորոտին), սակայն, անկախ դրանից էլ, երգաշարի սկզբի հատվածն ամբողջական է և խիստ ուշագրավ.

¹⁹ «Սասնա ծռեր», Բ, ա, էջ 289:

²⁰ Կ. Մելիք-Օհանջանյան, Միթրա-Միհրի արքայականներն ու գործակալները (Մ. Արեղյանի անվան գրակ. ինստ.-ի «Դրական-բանասիրական հետախուզումներ»: Ա, 1946, էջ 392):

²¹ «Սասնա ծռեր», Բ, ա, էջ 273:

²² Ա. վարդ. Տեր-Սարգսենց, Պանդուխտ վանեցին, 1875, էջ 117—119:

Խորոտ

Խորոտ Խորոտ տարահի,
 էրկանավիղ սուրահի.
 Խորոտ Խորոտնի քա՞նի,
 խորոտի ծոց կեխայնի,
 Խորոտն չէլնե՞ր՝ ի՞նչ կէլնե՞ր,
 Խորոտ սարեր ծըվարեր,
 Ո՞ր սև շիվար ծի շաներ.
 Շա՞հ եգան վաստակն էր,
 Շամիրամ մոր բերածն էր,
 Ոսկի խնձոր բերանն էր...

Տարիներ առաջ, մենք քննել ենք այդ երգը՝ հանգելով այն եղրակացու-
 թյանը, թե Խորոտը դիցարանական էակ է²³:

Դատելով անունից, տեսնում ենք, որ այս Խորոտն էլ կապվում է Խոր ան-
 վան կամ հասկացության հետ, նորից մատնացույց անելով դիցարանական
 ըմբռնումների մնացուկները: Դա այստեղ փաստարկվում է հատկապես «Շա-
 միրամ մոր բերածն էր» տողով, որտեղ նկատի է առնված հայ դիցարանու-
 թյան մեջ իր հատուկ տեղը գրաված Շամիրամի առասպելը: Նույնքան դիցա-
 րանական է Խորոտի հոր՝ «Շահ եգ»-ան ծագումը: Ըստ այդմ, Շահ եգը՝ Շա-
 միրամի զուգակիցն է: Նվ քանի որ հայ դիցարանության մեջ Շամիրամի զու-
 գակիցը Արա Գեղեցիկն է²⁴, իսկ վերջինս էլ հայտնի է եղել նաև իր եղակե-
 պությունը²⁵, ուստի Խորոտը նրանց դուստրն է: Այս կապակցությամբ «Խո-
 րոտ»-ը դառնում է լուրջ մտածումների առարկա: Խորոտ բառը գեղեցիկ առու-
 մով յուրովի կապվում է Արա Գեղեցիկի հետ: Բայց միաժամանակ այդ նույն
 բառն իր բնական ձևով (խոր+ոտ) հիմք է տալիս մտածելու նաև ավելի խորը
 զննացող իրողությունների մասին:

Խորոտ Մարենի և Խորոտի մասին եղած պատկերացումները թույլ են
 տալիս ենթադրելու, որ հայ իրականության մեջ ի դեմս այդ երկու էակների,
 ունենք հուշ՝ միևնույն աստվածուհուն վերաբերող զրույցներից ու առասպել-
 ներից:

Այս հարցը մեղ տանում է դեպի առավել վաղ ժամանակներից եկող պատ-
 էկերացումների խորքը: Խորոտի մասին ասվում է, թե՝

Խորոտ սարեր ծըվար:՛ր.

Որ սև շիվար ծի շաներ...

Այստեղ անուղղակի ակնարկ կա Խորոտի սարերում ծվարելու, այնտեղ
 ապրելու և բնության ուժերի հետ կապվելու մասին: Նման ձևով են պատկե-
 րացվել են նաև դիցարանական ուրիշ էակներ, որոնց հիմքում ընկած են տոտե-
 մական պատկերացումները: Պահպանվել են ժողովրդական շատ երգեր, որոնց
 մեջ հերոսը ծնված է համարվում լեռներում այս կամ այն կենդանուց և սնված՝
 տարբեր կենդանիների կամ բնության ուժերի կողմից: Խորոտն էլ ոչ միայն

²³ Ա. Շ. Մ և ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական զարգարվեստ, Երևան, 1955, էջ 351:

²⁴ Նույն տեղում, էջ 351—352:

²⁵ Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 157—158:

սարերի հետ է կապված, այլ նաև Շահ եգու, դիցաբանական Շամիրամի: Հիշենք մի օրինակ, որտեղ հերոսն այսպես է դրվատվում.

Զքեզ եղն ի սարին բերեր
Ու Շահին բազան սնուցեր...²⁶

Այստեղ հիշվող «Շահին բազան» ինչ որ ձևով կապվում է Շահ եգան հետ, մտածել տալով դիցաբանական պատկերացումների նույն ոլորտի մասին:

Առհասարակ հայ իրականության մեջ անցյալում բավական տարածված է եղել հուր անունը և մասնագետները դրանց մի մասի քննությանը արդեն փաստարկել են, որ այն գալիս է հայ ժողովրդի մեծ դրվագների՝ խուրիների անունից: Այդպիսիներից են, օրինակ, Հայկ նախնու որդիներից հուր, հուր-խոռունի տոհմանունը²⁷, Վանի ժայռի բարձրաքանդակի հոռիսոթ քարայրի անունը, հուրեի գյուղը²⁸ և այլն: Այս առումով տարակույս չի կարող լինել հատկապես Սասնա ծռերի մեջ պահպանված հուր Մանուկի, հուր Գուսանի, հուր Վիրապի, հուրոտ Մարեի և մյուսների մասին, որոնք գալիս են Սասունի հեռավոր անցյալից, երբ Սասունում ևս հայերի հետ միասին ապրում էին խուրիները: Նույնը կարելի է ասել նաև Վանի մասին, որտեղ գրի է առնված հոռիսոթի վերահիշյալ գովեր:

Գ. Հափանցյանը, խուրիների մասին խոսելիս, անգրագառնում է նրանց «хурри» աստվածությանը, գրելով, որ «...Как божество Hurri-ին իր անունն ստացել է «...от имени народа hurri, что смыкается с hurri «бык»²⁹, կամ՝ «от имени бога Hurri (тотема хурритов) имя города Hurma»³⁰:

Այստեղ մեղ համար կարևորը խուրիների հուրի աստվածությանն է: Ուշագրավ է նաև այդ աստվածության կապը եզրի գաղափարի հետ: «Сопроводителями,—գրում է Հափանցյանը,—бога грома и молнии у хурритов были обожествленные быки Hurri (Š) и Sari(Š)»³¹:

Մի այլ աղիթով նա գրում է. «Служители богов у хурритов были известны: быки Hurri и Šerri для бога Тешупа»³²:

Ինչպես տեսնում ենք, ըստ հայկական երգի հորոտը կին է, իսկ Hurri-ին տղամարդ՝ եզրի կերպարանքով: Զմոռանանք սակայն, որ հորոտը՝ հորի դավան է, հորից ածանցված (հոր + ոտ),

Այս առումով, միանգամայն բնական կլինի ընդունել, որ Հպոսի հորոտ Մարենը՝ հոր Մանուկի, հոր Գուսանի և նման ուրիշ հերոսների համանուն նախահոր դուստրն է, որի անունով էլ կոչվել է ինքը՝ ռա ածանցի հավելումով:

Այս հորոտի և եղան կապի մասին մեր դիցաբանության մեջ մեղ հայտնի փաստեր չկան. սակայն այն հանգամանքը, որ նրա որդին՝ Դավիթ Սասունցին հաճախ պատկերվել է եզակերպ, հիմք է տալիս մտածելու, որ նրա հայրը՝ Մհերն էլ պիտի նաև այդպիսի գծեր ունենար:

²⁶ Ա. Շ. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 128: Այստեղ կան նաև ուրիշ նմուշներ:

²⁷ Գ. Կապանյան, Хайаса—колыбел армян, Ереван, 1948, էջ 217—218:

²⁸ Լեռ, Երկեր, Ա, 1966, էջ 219, 153:

²⁹ Գ. Կապանյան, Хайаса..., էջ 39:

³⁰ Նույն տեղում, էջ 58:

³¹ Նույն տեղում, էջ 222:

³² Գ. Կապանյան, Историко-лингвистические работы, 1956, էջ 302:

ժողովրդական երգի մեջ խորոտը համարվում է Շահի եղան զավակ, էպոսում Դավիթը ոչ միայն հանդես է գալիս եղի կերպարներով, այլև կոչվում է «Շահի բալարան Դավիթ»³²։ Պարզ է, որ այդ Շահը նրա հոր և Շահի եղան նույնություն փաստերից է։

Տեղին է հիշել «Շահ» բառի հետ կապված ծիսական հետևյալ արարողությունը (Հայկադյան բառգրքում կատարած մեջբերումներից)։ «Եւաղացին վերտնցին և շահս աւաւին առաջի որթագլխուն»։ Բե ի՞նչ է նշանակում «շահս» անել՝ մնում է բացատրելի։

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել Խոռապետ (Բ թագ., Ը, 18) և «շահ խոռապետ» (Ծղիշե) բառերի վրա, որոնց հիմքում ընկած «խոռ» և «շահ» բառերը, իրենց իմաստավորած բարձրաստիճան պաշտոնների հետ, նորից մտածել են տալիս խորիների և էպոսի խոր կոչված հերոսների մասին։

Անցյալի պատմական իրականությունից Շահ հասկացության համար կարող էր հիմք հանդիսանալ Մովսիս-Շահու երկիրն՝ իր Շահունի տոհմով³⁴։ Այս երկիրը XII դարում համարվում էր խանիզալբատյան Մալաթիա, ալսինքս, Խուրի-միտանական երկիր³⁵։

Խորոտի Շահ եղան վաստակ լինելու և առհասարակ խորի եղան և նրա կովակերպ Լեվկոյրյակի կապակցությամբ ուշագրավ է խորի-միտանական մի փարպառուներ, որ մեկընդմեջ միմյանց են հաջորդում եղան, կենաց ծառ և կովակերպ կնոջ պատկերները³⁶։

Ուշագրավ են բնության պաշտպան ոգիները՝ Շահապետները՝ կիսամարդակերպ-կիսակենդանակերպ, «բնակեալք երկրի ալ և ալ դրից, անտառոց, ձորոց, լեռանց...»։ Նրանք երբեմն պատկերվել են նաև որպես «դժոխոց տիրողք»³⁷։

Խորոտի կապակցությամբ ուշագրավ է նաև խնձորի պարագան։

Ոսկի խնձոր բերանն էր...

Այս հատկանիշը խորոտին կապում է խնձորի հետ, միաժամանակ մատնացույց անելով խնձորի՝ որպես սիրո խորհրդանիշի մասին ժողովրդի մեջ ևղած պատկերացումները։ Էպոսում էլ խնձորը մեծ տեղ ունի հատկապես սիրո մրցույթների կապակցությամբ։ Իսկ ինքը՝ խնձոր բառն էլ, ինչպես գտնում են մասնագետները, խորիներին է փոխ առնված³⁸։ Եթե ճիշտ է՝ դա խոսում է խորոտ դիցուհու խորիա-հայկական ծագման օգտին։ Խնձորը մի այնպիսի պտուղ է, որի համար հայերը կունենային իրենց սեփական անունը։ Եվ եթե վերջինս գուրս է մղվել շրջանառությունից՝ փոխարինվելով օտար բառով, նշանակում է, որ այդ օտար բառն ունեցել է հաղթելու հնարավորություն։

Անկախ դրանից, մեր բանահյուսության մեջ հնարավոր է որոնել համապատասխան հետքեր։ Դրանց մեջ առաջնակարգ նշանակություն ունի «Սաս-

³² «Սասնա ծռեր», Բ, ա, էջ 404։

³⁴ Գ. Պ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմությունը, էջ 189։

³⁵ И. М. Дьяконов, Предыстория..., էջ 128։

³⁶ E. Strommenger, 5000 Years of the Art of Mesopotamia, New York, էջ 430։

³⁷ Դ. Ա լ ի շ ա ն, Հին հատար..., էջ 199—200։

³⁸ Гр. Капанцян, Хурритские слова армянского языка («Տեղեկագիր», 1951, № 5, էջ 33—34), Г. Джаян, Урартский и индоевропейские языки, 1963, էջ 129։

նա ծոեր» էպոսի այն մասը, որտեղ Բաղդասարի և Պղնձե քաղաքի թագավորի աղջկա սիրու պատմությունն է տրվում:

Պղնձե քաղաքի թագավորի աղջիկ
Մե կուժ լիք ար էր լցրե,
խնձուր բերան դրէ:
Մեկ կուժ էլ դարդակ էր բերան դրե,
Թղթի մեջ կիրիր էր:
«Բաղդասար տղա,
Իս Պղնձե քաղաքի թագավորի աղջիկն իմ:
Իմ սրտը քանց էսա դարդակ կուժ սարսուկի ա.
Իմ գլուխ քանց էսա լիք կուժ լիքն ի...
Երազով զքի տըսիր իմ, արի՛, ընձի առ»³⁹...

Այստեղ բնագրավ է մի կողմից խնձորի՝ որպես դիցունու սիրո խորհրդանշանի լինելը, իսկ մյուս կողմից՝ կթերի պատմությունը, որոնց բերաններից դրված են սիրո ճակատագրի հետ կապված խնձորներ: Այս վերջին պարագան հիշեցնում է խորոտի մասին ասված վերոհիշյալ միտքը:

Ոսկի խնձոր բերանն էր...

Այսպես, մի դեպքում խնձորը երևան է դալիս դիցունու բերանին, իսկ մյուս դեպքում՝ սիրո ելքը որոշող սահմանի Փաստորեն գաղափարական առումով նրանք նույնանում են: Այս նույնացումը առկա է նաև խորոտի գովքում:

Խորոտ Խորոտ տարահի,
էրկանավիզ սուրահի...

Խորոտն այստեղ համարվում է երկարավիզ սուրահի, այսինքն, կուժ, սահմանի իսկ որ «սուրահին» այդ իմաստն ունի, դա վկայվում է նույն աղբյուրում գտնվող մի ուրիշ երգի օգնությամբ:

Կթեմ թուխ մաքին,
Լցնեմ սուրահին,
էորոխկեմ յարին...⁴⁰:

Այդ բառը պահպանվել է մինչև մեր օրերը. օրինակ, Գ. Մահարու «Այրվող այգեստաններ»-ում կարդում ենք. «մի սուրահի կարմիր գինի» (էջ 74)⁴¹:

Այս փաստն էլ տալիս է դեպի պեղումներից գտնված այն հին ամանների, որոնք ունեն կնոջ կամ կնոջակերպ տեսք: Պահպանված են նաև հին աստվածուհիների հետ կապված մանրանկարներ, որոնք կնոջ դիմքով են պատկերված և բերաններին դրված է խնձոր⁴²:

Վերադառնանք էպոսի հաղորդումներին:

Պարզվում է, որ իսկական խնձորը աղջկա ապրած ասպրանքի աշտարա-

39 «Սասնա ծռեր», Ա, էջ 142—143:

40 Ա. վ ա ռ դ. Տ ե Ր-Ս ա Ր գ ս ե ն ց, Պանդուխտ վանեցին, էջ 88:

41 Շնորհակալությամբ օգտվել ենք լեզվաբան Գ. Գասպարյանի անտիպ բառարանից:

42 Ա. Ծ. Մ ն ա ց ա Վ ս յ ա ն, Հայկական զարդարվեստ, էջ 351—352:

կի ծայրին է դտնվում: Իա մի ոսկե խնձոր է, որին ձեռք գցողն իրաւունք ստանում ամուսնանալու աղջկա հետ:

Տղեն ասաց.— Ափո՛ւ,
էս ի՞նչ ի, տանիս ճրագի պես կը վառվա:
Ասաց.— Ո՛րտի, էնի ոսկի խնձոր ի.
Դորդ րմ կա էնու հիրդսնիրու տակ.
Ինչ զվաթով էլնի՞ էն գորդ վիրուցի,
Ջարկե էն ոսկի խնձոր բիրի տակ, զնի ո՞ր ծուց,
Թագավորի խիտ կոխվ անե, կտրիճ էլնի,
Աղչիկ կը տանի իրեն...⁴³

Բաղդասարին հաջողվում է խնձորին տիրել: Բայց նորից դժվարություններ.

Թագավորից հրաման ի՛
Ինչ մարդու մոտ էն խնձոր տեսան,
Թե կտրիճ էլավ, կոխվ արից, պրծավ,
Բն ուր կտրիճ չէլավ, զգլոխ կը գարկին...⁴⁴

Վանում տարածված է նաև ոսկի խնձորով սիրադեղ պատրաստելու ծեսը: Խնձորի մեջը փորվում էր, լցվում կախարդական բույսերով և ուղարկվում սիրած էակին՝ նրա մոտ ես սեր առաջացնելու նպատակով: Հայտնի է նաև, թե ինչպիսի մեծ անդ ունի խնձորի գովքը՝ ժողովրդական սիրո երգերում⁴⁵:

Անշուշտ, այս պատկերացումները կարող էին հիմնականում տեղական, բայց մասամբ նաև փոխառական լինել: Ուստի հնարավոր է, որ խուրիական խնձոր բառը հայոց լեզվի մեջ թափանցած լինի (եթե փոխառություն է) համապատասխան որևէ ծեսի օգնությամբ:

Անվիճելի է, սակայն, որ խերտը աստվածուհի է կամ սիրո հովանավոր, որի խորհրդանշանն էլ խնձորն է եղել:

Բացատրության կարիք ունի խոր անվան կցումը մեզ ծանոթ Մանուկ, Դուսան, Վիրապ, Մարեն (խոր՝ոտ) անուններին: Հենց դա ցույց է տալիս. որ էպոսն ստեղծողները նրանց տարբերել են իրենցից և այդ նպատակով կոչել իրենց «աղգանուհի», այլապես այդ «խոր»-երն ավելորդ կլինեին, ինչպես ավելորդ են եղել Սանասարի, Բաղդասարի, Մեծ ու Փոքր Մհերների, Դավթի, Խանդութի և այլոց համար հալ կոչումը:

Ուստի էպոսում խուրիները երևան են գալիս որպես երկրորդ գծի վրա կանգնած էթնոսային կերպարներ: Եվ դա բնական է, որովհետև խուրիները Ուրարտու-Հայաստանի վաղմում իրենց հզորությամբ գրավել են երկրորդ տեղը և նրանց Թևշերա աստվածը համարվել է հալդիից հետո երկրորդը՝ ողջ սկստության մեջ:

Փաստերը թույլ են տալիս նույնիսկ որոշ ենթադրություններ անել խոր կոչված հերոսների և հայերի ազգագրական կապերի մասին: Այս առումով ուշադրավ է հատկապես խոր Մանուկի կերպարը: Կան տարբեր խոր Մանուկ-

⁴³ «Սասնա ծռեր», Ա, էջ 149:

⁴⁴ Նույն տեղում, էջ 150—151:

⁴⁵ Զ. Աճեմյան, Մաղկաբաղ Վասպուրականի բանասիրության, 1917, էջ 37—38:

ներ. մեկը Սասունցի Դավթի եղբայրն է, մյուսը՝ Քեռի Թորոսի որդին։ Բայց իսկական գործողությունների մեջ գտնվող հոր Մանուկը ուրիշ ծագում ունի՝ էպոսի պատումներում բնութագրականն այն է, որ նա Աստղ Երզնկացու կամ Աստղ Յուլաթիի հակառակորդն է, իսկ վերջինս Մհերի և առհասարակ հրաարյունակիցների բարեկամը։

Աստղ Երզնկացին ըսեց.

— Մհեր, դու իմ ախպոր տղեն ես,

ես քեզի հետ կռիվ չըմ էնի.

հոռ Մանուկ իմ : ուշման ա, թող գա, կռվենք...⁴⁶

Մի այլ պատումի մեջ նա «Վան քաղաքացի հոր Մանուկն է»⁴⁷, իսկ մի երրորդում՝ առհասարակ արևելցի. «...արևելքի մեջ կապրեր մե փահլեվան, անունն հոր Մանուկ, էնի փախցրել էր մաղարի մեջ ապրող Աստղունքի կհի. Դեղձունին ու տարել էր ուր մաղաղեն...»⁴⁸,

Ուշագրավ է նաև, որ այս հոր Մանուկը, օտար լինելով հանդերձ, որպես կանոն, օգնություն է խնդրում Մհերից, որպեսզի նա փրկի իրեն իր հարազատի՝ Աստղ կախարդի հզոր հարվածներից, Հավանաբար դա էլ Սասունին ու Սասնա ծոերին ապավինած օտարազգի խուրիների խնդրած այն օգնության աղճապանքներից է, որով նրանք տեղ են գտել Հայաստանում և հովանավորվել երկրի տերերի կողմից։

Իսկ որ իսկապես խուրիները վերաբնակված են եղել Սասունի ու Վանի տարածքում այդ մասին կան մասնագիտական վստահելի եզրակացություններ։ Օրինակ, Գ. Մելիքիշվիլին, Արմե-Շուպրիա երկրների մասին խոսելիս, նկատել է տալիս խուրիների առկայությունն այնտեղ, և ավելացնում. «армянские племена в дальнейшем, очевидно, ассимилировали значительную часть живших здесь хурритских племен»⁴⁹, նման միտք է հայտնում նա նաև Վանի գավառի մասին⁵⁰, Համապատասխան եզրակացությունների են հանգել նաև ուրիշ մասնագետներ։

Այսպիսով, անվիճելի է հայ-խուրիական կապերի երբեմնի գոյությունը իրաստարկող վկայությունների առկայությունը հայ բանահյուսության և աղ-պարական նյութերի մեջ։

Անդրադառնանք նաև «ոտ» ածանցով հայտնի անուններից «Աշոտ»-ին։ Հ. Աճառյանն այս անվան բացատրությունը չի գտել։ Մեղ թվում է, որ այն կազմված է Աշոտ եղանակով։ Թե ինչ է նշանակում «աշ» արմատը մեղ համար մնում է անբացատրելի։ Սակայն գոյություն ունեն մի շարք բառեր, որոնք ակնարկում են նրա դիցաբանական պատկերացումների հետ կապ ունենալը։ Հետաքրքրական է, օրինակ, աշոգի (աշոգի) բառը («և զտէրն բուլորեցուն Սևմայ ստացուած աշոգի աստուածութեանն»), որ հիշում է Հ. Աճառյանն իր Արմատական բառարանում։ Առանձին ուշադրություն են գրավում

⁴⁶ «Սասնա ծոեր», Բ, Բ, էջ 526:

⁴⁷ Նույն տեղում, էջ 85:

⁴⁸ Նույն տեղում, էջ 224:

⁴⁹ Գ. Ա. Мелликшвили, Наприм-Шарту, Тбилиси, 1954, էջ 419:

⁵⁰ Նույն տեղում, էջ 100:

«Արշալոյս» բառի հիմքում ընկած վաղեմի ձևերը՝ «աշ» արմատով. աշալուրջ, աշալուրշ, աշալուջ, աշալուշս, աշալուս, աշմուշ և այլն, որ հիշում է Հ. Աճառյանը նույն բառարանում: Արշանի կարծիքով «Արշալոյս»-ը և Աշալուսը՝ դիցաբանական թուի»⁵¹: Դրանք էլ իրենց հերթին կապվելով օրվա ժամերի հետ, հիշեցնում են «Արագոտ», «Շաղալոտ», «Կամալոտ» և մյուս անունները՝ նկատելի է, որ մեզ հետաքրքրող բառերը երևան են դալիս նաև աշալուրշ, աշալուշ ձևերով: «Աշմուշ»-ը մասածել է տալիս Աշմուշատ քաղաքի անվան բացատրության մասին՝ այն կապելով «աշ» արմատի հետ:

Դիցաբանական առումով ավելի ցայտուն է «աշեցի» կոչումը՝ կապված աղանդավորության հետ, որին հանդիպեցինք վերևում: Այ 1495 ձեռագրից մեջ բերված դիցաբանական տոհմացանկում: Մուստի այստեղ աշեցի բառի տակ պիտի հասկանալ աղանդավորական մի հին ուղղություն: Հետաքրքրական են Աշոց, Աշվան, Աշինուտ, Աշուտ, Աշնակ տեղանունները, Աշնակ, Աշմուտ անունները, աշուն, աշնուտ բառերը և այլ շատերը, որոնք մի կողմից խոսում են աշ արմատի երբևեմի դիտակցված բովանդակության, իսկ մյուս կողմից՝ նրա դիցաբանական ծագման մասին: Բուսական աշխարհից հետաքրքրական է սշօրայ կամ տաբեկան հացաբույսի անունը, իր հերթին պակաս ուշագրավ չէ աշ և օր բառերի մեջ առկա ժամանակի դադափարը, որն առնչվում է տաբեկան ձևի հիմքում ընկած տաբի բառի հետ և նորից կապվում ժամանակի դադափարին: Դա էլ յուրովի առնչվում է աշալույս բառի հիմքում ընկած ժամանակային իմաստի հետ: Ըստ երևույթին դրանք կարող են խաչաձևումով իմաստավորվել և՛ նոր տարվա, և՛ նոր օրվա սկիզբը՝ կապված աշնանային ամանորի տոմարական հաշիվների հետ: Բոլոր դեպքերում «աշ»-ի տեղ հասկացվել է ոգի, աստվածություն:

Վերևում տեսանք, որ նման դեպքերում արմատը Լրբեմն վերցնում է: Քերս մասնիկը և իմաստավորում գաղափարի հոգնակին, նրա մեծ քանակը: Օրինակ, Խաչեօ, Խանդեօ, Լուսեօ, Շատեօ և այլն: Աշ արմատն այդպիսի («եր») կցորդ չունի, բայց նրանից ստեղծված բառերի մի մասը յուրովի կապվում է հոգնակիության դադափարի հետ: Օրինակ, Աշմուշատ տեղանունը, նման ձևով բարիշ վայրանուններ էլ ունենք. Երվանդաշատ, Արտաշատ, Զարիշատ, Աշտիշատ, Վտսակաշատ և այլն: Հյուսիսային, Աշտիշատ անվան մասին խոսելիս, անդրադառնում է կղած բացատրությանը («իբր յաշաաշատ, զոհաշատ»), զրեկով, թե «այս մեկնությունը արժեք չունի»⁵²: Ապա նա փորձում է «շատ» մասնիկը նույնացնել լոգոսական ուրախություն ցույց տվող համապատասխան բառի հետ⁵³, որը, մեր կարծիքով, սխալ է: Ինչպես տեսանք, գաղափարի հոգնակին ևս ընդունված է եղել հայկական անձնանունների մեջ, բայց հոգնակին կարող էր արտահայտվել նաև «շատ» ձևով՝ տեղանունների ստեղծման ժամանակ՝ ծառայելով նույն գաղափարին և բխելով համապատասխան պատկերացումներից:

Այսպիսով տեսնում ենք, որ, իրոք, հայոց լեզվում պահպանված «ոս» և «ուտ» ածանցների մի մասը սերտորեն կապված է հին պատկերացումների և համապատասխան մտածողության հետ: Դրանց հանգամանալից քննություն:

51 Չ. Արիշան, Հին հայաստան..., էջ 158—159:

52 Հ. Հյուսիսային, Հին հայոց տեղայն անունները, Վիեննա, 1907, էջ 301:

53 Տե՛ս նաև էջ 343—«Զարիշատ»:

օգտակար է ինչպես լեզվաբանական որոշ օրինաչափությունների ճշգրտման առումով, այնպես էլ ազգագրական-պատմական: Այս վերջին տեսանկյունից նրանք կարող են օգտագործվել որպես նոր փաստեր և բացառիկ դեր խաղալ այն դեպքում, երբ առհասարակ բացակայում են համապատասխան փաստերը:

МИФОЛОГИЧЕСКИЕ ИМЕНА И СЛОВА С СУФФИКСАМИ «ОТ» («ՈՏ») И «УТ» («ՄԻՏ»)

А. Ш. МНАЦАКАНЯН
Доктор исторических наук

Р е з ю м е

Впервые делается попытка выделить и изучить ряд сохранившихся в армянском языке мифологических имен и слов с суффиксами «от» («ոտ») и «ут» («ուտ»). Таковыми являются: Փնազնոտ (Փառանձոտ), Շվոտ, ճոկանոտ, ճանկոտ, Սանոտ, (Սանտրուկ), Խանդուր (Խանդուտ), Խորոտ, Աշոտ, դիվոտ (դիվուդ), լուսնոտ, ճարոտ, րդպոտ, Հրոտից (Հրաքոտ), արոտ, շաղավոտ, կամավոտ, արագոտ и т. д.

С помощью этих имен и слов исследуются некоторые историко-мифологические явления и понятия.